ՄՀԴ.

Պատմութեան ծանօթ է Յիսուսեան նշանաւոր ընկերութեան ունեցած երբեմնի ծանր օրերը։ Մեր նամակագիրը սոյն անցքերը կը տեղեկագրէ Մելգոնեան Աբրահօր, Հռովմայ մէջ Յեւիտնիս համար վայր մը ստանձնելու առաջարկով։

Գերապատիւ և Գերամեծար տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի
և Աբբայի կարօտիւ սիրոյ ողջոյն և համբոյր աջոյն

... Գերյարգելի, յայտնապէս տեսանեմ, և կարի մօտ երևի, որպէս և բազումք գուշակեն ջնջումն ճիզվիթաց..., և տեսանի յորէ յայսմանէ ևս չքջիլ այս ի բերանս Գարտինալաց ոմանց ի Գօնկրէկացիոնս, զօլով պապն դէմճիարօ ճիզվիթաց, և նէփօթն նոյնպէս, և սկրըթարիօ տի սթաթօն առաւել քան զնոսա, ի բառնալ սոցա ամենայն ինչ վեր ի վայր լինի առանց կարծեաց. և ջնջեն ի սպառ զանուն նոցա յաշխարհէ... անհաւատալի ինձ է տեսանել զփոփոխութիւն սոցա ի ծայրէ ի ծայր, որ երբեմն աշխարհի տիրէին, այժմ ի հօռմ իսկ ի յստուերաց իւրեանց երկնչին, և սկսան տկարանալ, և զաղքատութիւն մեծ ցուցանել ի տնտեսութիւնս և յեկեղեցիս. և ի մեծամեծաց երկրիս հեռանալ. ևն։ Զայս ամենայն գրեմ միայն վասն այսորիկ, զի յորդորեցից զձեզ առ ի հաճիլ, և առաքել զոմանս ի միաբանիցն աստ առ ի հիմնել զմի փոքրիկ օսփիցիօ, որպէս զի ի պակասիլ սոցա աստի, կարօղ իցեմք ունիլ գոնէ զմինն ի բնակութենէ նոցա վասն մեր... ով հաւատայր յետ փօթուգալին արտաքսիլ ի Ֆրանսայու, և յետ Ֆրանսայու ի սպանիայու, և յետ սպանիայու, ի Նապօլու և ի չիչիլեայէն. և յետ սոցա կան արտաքսելիք և ի փառմա փիաչենցայէն և յայլոց։ Ուստի լաւ լինի յայժմէն պատրաստել, որպէս զի ի մերձենալն կարիցէք իբրև ճանաչեցեալք և կարևորք, պահանջել և խնդրել։ Լուայ ի բազմաց, զի եթէ էաք կամ ի Ֆրանսայ, կամ ի Սպանիայ, կամ ի Սիչիլիայ, և կամ ի Նաբօլի, կարի դիւրին էր զմինն ի տեղեաց նոցա տրօքն և կէլիրոմն շնորհել մեզ։ Գիտեմ զի էին տեղիք վասն ձեր դժուարաձեռն թէպէտ Նաբօլի էր վայելչայարմար, սակայն էանց, և չիք այլևս հնար, գոնէ մի կորուսանէք զառիթն երկրիս, բաւական է թէ իցեն երկու անձինք յանուն ձեր ի միում անկեան բնակեալք, և ի լինիլ առթին ի յայտ եկեալք...։

Գրեցաւ ի Հռոմ 1667 — *Անարժան ծառայ*
ի դեկ. 5 — *Հ. Գէորգ* [*Պաղտասարեան*]

ՄՀԵ.

Հ. Ստեփաննոս Վարդապետ Ագոնցի (յետոյ Ընդհանրական Աբբահայր) հօրաքոյրն է որ կը գրէ առ ինքն, քահանայական ձեռնադրութեան առթիւ։ Նամակը թէպէտ ուղղագրական սխալներով, սակայն կ'արժէ ներկայացնել հոս իր տեղական բարբառին ու գողտրիկ զգացումներու պարզութեան և արտայայտութեան կերպին համար։ Թուղթիս մէջ կիրարկուած եւրոպական կէտադրութեան ձևը (; : .) վանց բրած ենք։